

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԱՏՆԻՉ ՎԻՐԱԲՈՅԺ ԹԻԻԹԻԻՆՉԵՎԻ Չ Ա Ր Կ Ո Ւ Մ Ն

Սօֆիայից մեզ հեռագրում են.—

Յունիսի 23-ին (ն. տ.) երեկոյեան ժամը 9-ին Վ. Պօլսում դաշնակցականները զարկեցին նշանաւոր ՄԱՏՆԻՉ վիրաբոյժ ԹԻԻԹԻԻՆՉԵՎԻՆ: Մատնիչը մերձ ի մահ է: Ահաբեկիչները ազատ են: Ժողովրդի ոգևորութիւնը անսահման է: Անսահման է նոյնպէս թիրք կառավարութեան սարսափը: Կառավարչական շօջանների մէջ ընդհանուր յուզում: Մանրամասնութիւնները նամակով:

ՀԱՄԻԴԻԷ ՀԵԾԵԼԱԳՈՒՆԴԻ ԿԻՍՍԱԲԱԺՆԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ (Թարգմանութիւն)

Վսեմ. էֆէնդի,

Ներփակ կը հաղորդեմք Ձեր Վսեմութեան Մալազկերտ գաւառի Թիւսթէմ Աէտիկ գիւղացի ըայաներէն (հարկաւ հայ) Խաչօ անուն անձին աղերսագիրը, որով կը յայտնէ նա, թէ հայաստանցի Աշիրէթի քրդերը իր վրայ յարձակելով՝ յափշտակեր են երկու գոմէշ և երկու ձի, որոնք՝ խուզարկելով, գտներ են Եէքեմալ գիւղացի Խալիլ աղայի տունը, ուստի և կը խնդրէ, որ այդ անասունները ետ առնուին ու իրեն յանձնուին: Հանրածանօթ իրողութիւն մ' է, թէ որ աստիճան կարևորութիւն ստացեր են այս հայերուն չարամտութիւնը և օտար պետութեանց չար դիտաւորութեան այս տեսակ ակնարկները: Եւ որովհետև այս միջոցիս գործերու սոյն ընթացքը և փափուկ ու սրբազան քաղաքականութեան հրատապ սոյն վիճակը կը պահանջեն, որ բողոքի առթիւ ոչ զքի չթողատրի Մուշ գալու հե-

տևաբար պէտք է, որ արդարութեան ամեն պահանջ ժամանակին գործադրէք և միանգամայն մեծ ուշադրութիւն դարձնէք, հետազօտելու և գտնելու այն միջոցները, որոնցմով կարելի լինի գէթ առ այժմ Համիդիէի հեծելագուններու պետերը գովելի վարմանց մէջ դնել և առ այս ձեռք առնելիք միջոցներն ալ մեզ ծածկաբար տեղեկագրէք և յիշեալին խնդրագրին ու ներփակ թղթոյն իմաստին համեմատ հարկ եղած գործադրութիւնը և ասոր հետևանքը իմացնէք:

Համիդիէի և կանոնաւոր
1 Մարտ 1895, զօրաց կիսաբաժինների հը-
Մուշ րամանատարի փոխանորդ
(Կնիք) ՄԵՐԼԻՎԱ
ՄԷՀՄԷՏ ԲԷՀՄԻ

Ր Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

1-ն Յունիսի 1895 թ.

Տաճկահայաստանում մտցնելիք երեք պետութիւնների կազմած ռէֆորմները, որ մի ժամանակ խստութեամբ իրրև դադարիք էին պահուում, այժմ հրապարակի վրայ են դրած իրենց ամբողջութեամբ: Դեռ այդ ռէֆորմները չհրատարակեած, դեռ բողոքովին անձանօթ նրանց բովանդակութեան, մենք առանց մի որ և է վերապահութեան, բացարձակապէս վերաբերել ենք բացասօրէն, իսկ այսօր կարող ենք բնաւորոշել հետևեալ խօսքով՝—սարը երկունքի մէջ էր և վիժեց: Հենց սկզբից էլ մենք այլապէս չէինք կարող վերաբերել, որովհետև բաւական էր մեզ, որ ռէֆորմները կազմում է մէնմենակ դիպլօմատիան, և ոչ մի նչև իսկ նոյն իրկրի ժողովրդներից ընտրւած ներկայացուցիչների աջակցութեամբ, մի կողմից, իսկ միւս կողմից էլ, որ նրանք, ռէֆորմները, այսպէս թէ այնպէս, սուլթանի կառավարութեան հաւա-

նուժիւնը պիտի ստանային. հետեւապէս և այդ ըէֆօրմիները իրենց էութեամբ երբէք չէին կարող լինել կազմուած երկրի՝ Տաճկահայաստանի և նրա ժողովրդների շահերի, պահանջների համեմատ, որովհետև ոչ դիպլոմատիան և ոչ էլ սուլթանի կառավարութիւնը երբէք չեն ղեկավարել այդ երկրի, այլ «իրենց պետական շահերով»։ մինչդեռ եթէ դիպլոմատիայի հետ մասնակցէին և երկրի ներկայացուցիչները, մեզ ենթադրել կը տային, թէ գուցէ մասամբ երկրի ժողովրդների շահերը կարող կը լինին այնտեղ տեղ բռնել։

Մենք ասում ենք՝ արդէն մեզ բաւական է, որ ըէֆօրմիներ կազմողը բացառապէս դիպլոմատիան էր, մի կողմը թողնելով մինչև իսկ, որ այդ ըէֆօրմիները պէտքէ սուլթանի կառավարութեան հաւանութիւնը գանձէին՝ ոյժ ու զօրութիւն ստանալու համար, որ մենք հենց սկզբից բացասօրէն վերաբերուէինք՝ առանց ծանօթ լինելու անգամ նրանց բովանդակութեանը, որովհետև դիպլոմատիայի հասարակական վարդապետութիւնը ոչ թէ մարդկային իրաւունքների հաւասարութիւնն է, ոչ թէ անհատական ու հասարակական ազատութիւնն է, նրա ոգին՝ ոչ թէ մարդասիրական գաղափարներն են, իսկ հաւատը՝ թողելին, կեղեքողներին, հալածողներին, բռնաբարողներին պաշտպանելը, դիպլոմատիան շատ-շատ հեռու է դրանից, այլ որ նրա ամբողջ գոյութիւնը հիմնուած է «պետական շահերի» վրայ և դրանից դուրս նա ոչինչ չէ ճանաչում՝ նա ամեն ինչ զԾ կը բերի դրան, այլ որ նրա գործունէութեան դրդիչ ոյժը, իւր պետութեան համար «չաղ կտոր» ձեռք բերելն է՝ ի վնաս ինչի և ում էլ ուզում է լինի, այդ մի և նոյն է։ Դիպլոմատների բերնում յորջորջող մարդասիրութիւն, քաղաքակրթութիւն, կամ ինչպէս շատ են սիրում ասել Հայկական խնդրում, «քրիստոնէութիւն» բառերը դատարկութիւններ են և դրանք միայն իբրև զէնք են, միջոց են նրանց ձեռքում իրենց նպատակին ծառայեցնելու, դրանք դիմակներ են դիմակաւորելու իրենց պետական շահերը։

Դիպլոմատիայի ձեռքով կազմած ըէֆօրմիները ամենից առաջ պիտի բաւականութիւն տային Տաճկահայաստանում շահ ունեցող իւրաքանչիւր պետութեան առանձին առանձին և ոչ թէ այդ երկրում ապրող ժողովրդներին. երկրորդ՝ ընդհարում չառաջացնելու համար, նրանք պիտի համերաշխացնէին հակառակորդ պետութիւնների շահերը, երրորդ՝ նրանք մի և նոյն ժամանակ համ պիտի պաշտպանէին սուլթանի կառավարութեան իշխանութիւնը, չորրորդ՝ համ էլ հայ ժողովրդի աչքերին թող փչելով, հայկական յեղափո-

խութեան առաջն առնէին, որպէս զի հնարաւոր լինի պահպանել քաղաքական կացութիւնը, statu quo:

Ահա թէ դիպլոմատիան ինչ մօտիւններով է ղեկավարել Տաճկահայաստանի համար ըէֆօրմիներ խմբագրելիս, ահա Տաճկահայաստանի համար ծրագրող ըէֆօրմիները բացառապէս դիպլոմատիայի ձեռքով կազմած, պիտի անցնէին այս բարդ և վերին աստիճանի դժուարին ճանապարհներով, մինչև որ նրանք կարողանային հասնել բուն երկիրը։ նրանք անցան ճանապարհի մի մասը, բայց դեռ միւս մասը չեն անցել. գուցէ նրանք վաղը կանցնեն, այդ միւսոյն է, դրանք նեխուած, լուծուած դիակներ են, ինչ պէտքէ սպասել...

Ինչպէս միշտ, այնպէս էլ ներկայումս Հայկական խնդրով հետաքրքրող կառավարութիւնները, որ ղեկավարում են իրենց պետական շահերով, ոչ մի կասկած չկայ, ձեր առջևն է պատմութիւնը, ձեր առջևն է նոյն իսկ ինքը, երեք պետութիւնների կազմած «իրեն թղթին չարժող», «վիժուած ըէֆօրմիների» թարմ ծրագրերը և վերջապէս ժամանակը։

Այդ ըէֆօրմիները ծրագրել են Տաճկահայաստանի համար՝ իբր վերջ տալու տիրող պայմաններին. այդ պայմանները շատ վաղուց գոյութիւն ունին, դրանք ոչ երեկւայ ծնունդ են և ոչ էլ անցեալ օրւայ. դիպլոմատիան այդ շատ լաւ գիտէ, ի՞նչ է արել. ոչինչ։ Մի բոպէ մոռանանք ճշմարտութիւնը և ենթադրենք, թէ դիպլոմատիային Տաճկահայաստանի իրերի դրութիւնը յայտնի եղաւ միայն Սասունի կոտորածից յետոյ. իսկ ահա շուտով լրանում է տարին, ինչ է արել նա. Սասունի տմարդ կոտորածից յետոյ անցան ձիգ ամիսներ, դիպլոմատիան երկար տատանելուց յետոյ, հազիւ գործին պաշտօնական բնաւորութիւն տւաւ. երկար բանակցութիւններից յետոյ միայն բարեհաճեց ուղարկել Քենիչ-Յանձնախումբ՝ Սասունի կոտորածը քննելու. իսկ այս տարւայ մարտապրիլ ամիսներին խմբագրեց ըէֆօրմիների ծրագրերը, մինչդեռ Բաշիպուզուկին ներկայացրեց մայիսին. այժմ արդէն յուլիս ամիսն է սկսում և այդ ողորմելի ըէֆօրմիները դեռ քաջըլում են երեք պետութիւնների դեսպանների և Բարձր Դրան մէջ, իսկ միաժամանակ այն երկրում, որի համար խորհում են պետութիւնները, շարունակում են նախկին պայմանները, շարունակում է նոյն դժոխային կեանքը, տեղի են ունենում նոյն հրէշային գազանութիւնները։ Խորհրդակցեցեք նրանց հետ։ Մի՞թէ այս փաստերից յետոյ էլ կարելի է կասկածել, որ պետութիւններին զբաղեցնող իսկապէս երկրի շահերը չեն։ Եթէ պարզ է, որ պետութիւնները ղեկավարում են իրենց շահերով, պարզ է նոյնպէս, որ նրանք պիտի լինին ի վնաս ժողով-

ղեան, այս է լոգիկական հետևողութիւնը վերոյիշեալ դատողութեան, որոհետև ներկայ պետութիւնները իրենց կազմակերպութիւնով ոչ այլ ինչ են, եթէ ոչ որոշ դասակարգի շահերի արտայայտիչը, հետևապէս և նրանց պաշտպանը: ներկայ պետութիւնները այժմեան տիրող դասակարգի պահանջների, ներկայ հասարակական կազմակերպութեան ու նրա անտեսական յարաբերութեան մարմնացումն են. և որովհետև տիրող դասակարգը իւր էութեամբ բոլորովին հակառակ է աշխատաւոր դասակարգի պահանջներին, պարզ է, որ ներկայ պետութիւնները ևս պիտի հակառակ լինին. ինչպէս տիրող դասակարգը իւր գոյութիւնը հիմնում է աշխատաւոր դասի աշխատանքի վրայ, իւր գոյութիւնը պահպանում է ժողովրդի բերնից խլած կտորով, նրա վզին նստած, նոյն են և ներկայ պետութիւնները՝ իրրև հաւատարիմ արտայայտիչները տիրող դասակարգի պահանջներին:

Ներկայ պետութիւնների էութիւնը լինելով պաշտպանել մի որոշ դասակարգի շահերը ի վնաս ընդհանրութեան, աշխատաւոր ժողովրդի, հասկանալի է, որ նրանց կազմած ընկերակցներն էլ չէին կարող լինել ծածկահայաստանի ժողովրդների բաղձանքների հաւատարիմ արձագանքը: Եւ այսօր իրենք, երեք պետութիւնների ծրագրած ընկերակցները պարզապէս հաստատում են, որ դրանք հալածող, տանջող, բռնաբարող ժողովրդի շահերը պաշտպանելու համար չեն խմբագրւած, այլ պահպանելու այդ երկրում քաղաքական ներկայ պայմանները, statu quo, ինչպէս էլ պահանջում էին իրենց պետական շահերը:

ՈՍՏԻԿԱՆ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Վեդրոնական կոմիտէի մայիս 7-ի, 61-դ նստին մէջ քննութեան ենթարկելով այն մանրամասն տեղեկագրերը, որոնք կազմւած էին նշանաւոր հայ ոստիկան կոմիտէի հաճի Տիգրանի ամենագձուձ գործունէութեան մասին, տեսնւեցաւ, որ

Հաճի Տիգրանը, որդի Ղալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցիի նախկին լուսարարի մը, բաւական ատեն ծառայած է նոյն տեղ հօրը պաշտօնով, ժամանակ մը սպասաւորած է նոյն եկեղեցիին քարոզչին Յովսէփ վարդ. Այվազեանի քով և ապա ընդունած է սարկաւազութեան կարգը:

Ոստումով մը, որ այնքան սովորական է մեր մէջ, եկեղեցական կոչման պատրաստող այդ գարշելին, իր ընդունակութիւններուն աւելի յարմար կը գտնէ ինք-

զինքը նւիրել զզւելի գործի մը, որ շատ աւելի շահաւոր կրնար ըլլալ իրեն, այն է լրտեսութեան:

Եւ հաշիւը սխալ ըրած չէր:

Տիգրանն ի բնէ արդէն խօսու, սրամիտ, ճարպիկ, առաջին օրէն յաջողութիւն գտաւ իր նոր ընդգրկած ասպարէզին մէջ, ու այնքան պէտք պիտի ունենար հիմա իր ընդարձակ ծանօթութիւններուն, Ղալաթիոյ և Բերայի հայերուն, մանաւանդ կրթւած դասակարգին, որոնց հանդիպելու և ճանչնալու շատ առիթներ ունեցած էր Ղալաթիոյ եկեղեցիին ու խորհրդարանին մէջ, ուր կը գումարէին Ազգային ժողովի նստերը, ուր տեղի կուենային այլ և այլ խորհուրդներու գումարումները, ուր կը գտնէր Ազգային Մատենագարանը, ուր վերջապէս, իր վարդապետի սենեակին մէջ, յաճախ տեսած էր այդ դէմքերը:

Իր գործունէութիւնը թէև բանուկ, բայց աչքի չէր զարկած տակաւին, երբ վրայ հասաւ տէր Սուքեասի սպանութեան փորձը Մայր եկեղեցիին մէջ: Այդ օրը հաճի Տիգրան հոն կը գտնէր իր պաշտօնին բերմամբ, ճանչցաւ երեք ահաբեկիչները և կառավարութեան մատնեց անոնք:

Այնուհետև ալ բացւած էր իր ճամբան. ոստիկանութեան նախարարի մասնաւոր ուշադրութեան արժանացաւ հիմա, ոչ միայն իր մասնաւոր յատկութիւններով, որոնք գնահատելի էին լրտեսութեան գործին համար, այլ և իր կատարած այդ նոյնպիսի արարքով, որ իր գործունէութեան առաջին շրջանին գլուխ գործոցն եղաւ:

Ժողովրդին համար պատուհաս մը և ոստիկանութեան համար գիւտ մը եղաւ հաճի Տիգրան. առաջին անգամ ըլլալով՝ նազըմ՝ փաշա անոր անձին մէջ գտաւ գործին մարդը. և հաճի Տիգրան շուտով ոստիկան և ապա ոստիկան-կոմիտէի աստիճանը բարձրացաւ:

Ալ անկէ ետքը հաճի Տիգրանի մատը ոստիկանութեան ամեն գործի մէջ կարելի էր տեսնել:

Խուզարկութիւն մը հարկ էր ընել հայու մը տան մէջ, Պոլսի ո՞ր և է թաղ մը, անոր ցուցմունքներով, առաջնորդութեամբ ու մասնակցութեամբ կը կատարէր: Յամառ բանտարկեալ մը պէտք էր խոստովանցնել հաճի Տիգրանի ճարտարութեանն էր, որ դիմում կընէին: Յեղափոխականներ որսալու կամ պատահմամբ գտնւած հետքեր բանալու և գաղտնի հետապնդելու գործ մը կար, սարկաւազութենէ վիժած հաճի Տիգրանն էր, որուն կը յանձնէր այդ դժւարին ու փափուկ գործը: Կը ծպտէր, ինչպէս ոչ ոք փորձած էր իրմէ առաջ. կեղծ ծամերով կեղծ մօրուքով, մուրացկանի հագուստով կառապանի տարագով, ջրհանկիրի նման, վերջապէս այն ամեն կերպով որով կրնար մուտք ունենալ ժողովրդի այլ և այլ խաւերուն մէջ: Տիգրան յոգնել չէր գիտեր. իր ամբողջ մտաւոր կարողութիւնները լարած՝ անձնատուր էր եղած իր գործին, ուր թուրք ոստիկաններու համբաւեալ իշային տխմարութիւնը կատարեալ ասպարէզ մը կը բանար իրեն, առանց մրցորդի:

Թուրք ոստիկանութիւնը մինչև հիմա ունեցած չէր հաճի Տիգրանին նման հետախոյզ մը:

—Ուստի Կեղրոնական Կոմիտէն իր վերոյիշեալ մայիս 7-ի 61-դ նստին մէջ՝

Ի նկատ առնելով, որ ոստիկան-կոմիտէր հաճի Տիգրանին վերագրած բոլոր յանցանքները՝ իբրև լրտեսի, իբրև մատնըչի, իբրև կառավարութեան գործիք-պաշտօնեայի, անոր հնգամեայ (1890-1895) զազրելի գործունէութեան շրջանին մէջ, կատարելապէս կը հաստատուին տեղական կոմիտներու ներկայացուցած տեղեկագրերով և մատնիչ հաճի Տիգրանի գոհերուն անձնական վկայութիւններով,

Ո ս տ ի կ ա ն - կ ո մ ի տ է ր հ ա ճ ի Տ ի գ Ր ա ն ը մ ա հ լ ա ն դ ա տ ա պ ա ղ տ ե ց

Եւ վճռին գործադրութիւնը յանձնեց Ռուսի կոմիտէի Թեան խմբի ահաբեկիչներուն:

—Մինչդեռ ահաբեկիչները կը հետեւին հաճի Տիգրանին, պատեհ առիթ մը որոնելով վճռն ի գործ դնելու, դատապարտեալը նոր յանցանք մըն ալ աւելցուց իր բազմաթիւ ոճիրներուն. Համբարձման տօնին (մայիս 11) ժողովրդային ինքնաբուխ ցոյցին մասնակցողներէն 70 հոգիի ձերբակալումը, դէպք մը, որ կրնար շատ ծանր հետեանքներ ունենալ, եթէ միայն ոստիկանութիւնը չիտլածար օր առաջ արձակելու այդ մարդիկը, նոր խռովութեան և աւելի մեծ դժգոհութեան առիթ չտալու համար:

—Վերջապէս մայիս 21(յունիս 2)-ին երեկոյեան Ժամը 8-ին ահաբեկիչները կը հասնին Տիգրանին ետեւէն Բերայի մէջ, իր տան մօտերը: Ահաբեկիչներէն մէկը երեք անգամ կը պարպէ ուղիովէրը մատնչին վրան. երրորդ հարածին Տիգրան, որ սարսափած էր, ինքզինքը կը գտնէ և ինքն ալ իր լեզուովէրը կը քաշէ ու կարձակէ: Գնդակը կը վրիպէ. ահաբեկիչներու չորրորդ գնդակը կը ջախջախէ հաճի Տիգրանի կզակը, ու լեզուն կը կտրէ. մատնիչը գետին կը տապալի, ցաւի սոսկալի ճիչ մը արձակելով:

Ոստիկանները, որոնց պահակը վճռին գործադրութեան վայրէն քանի մը քայլ միայն հեռուն կը գտնուէր, լսելով ուղիովէրի պայթոցները, խոհեմութիւն կը համարին երևան չելալ և սպասել քիչ մը, մինչև որ ահաբեկիչները կանհետին և մինչ ամբողջ իրենցմէ առաջ խուժած էր մատնչին հոգեւորքին վկայ գտնուելու:

Ամենքն ալ կը կարծէին, թէ մեռած է հաճի Տիգրան, ինչպէս նոյն օրը գրեցաւ Սօֆիայի մեր թղթակցին: Տիգրան մեռած չէ տակաւին, սակայն բժիշկները չեն յուսար թէ կապրի:

Եթէ առողջանայ իսկ՝ իր ջախջախեալ ծնօտով, իր թլատ լեզուով, իր խեղած, սոսկում դէմքով յաւիտենական դատապարտութիւն մը պիտի ըլլայ բոլոր իր նմաններուն և մարմնացեալ պատժի մը սարսափը, որ Գամոկլէսի սուրին պէս պիտի կախուած մնայ անոնց գլխուն վերև:

—Հաճի Տիգրան՝ անկարող խօսելուն, դողդողուն ձեռքով այնչափ միայն կրցաւ գրել թղթի մը վրան, որ Համբարձման տօնին օրը իր մատնութիւնը բանտարկ-

ւածներուն մէջ, որոնք ազատ արձակած էին, պէտք է որոնել ահաբեկիչները:

Բայց ի զո՞ւր. անմեղ մարդիկ միայն կրցան ձերբակալել. մինչ ահաբեկիչները, որոնք վճռը գործ դրին, ազատ և ապահով են, շնորհիւ վեհափառ Սուլթանին, և նոր նմանօրինակ վճիռներ գործադրելու հրամաններու կը սպասին:

—Մատնիչը դեռ չմեռաւ, բայց սոսկալի վիճակի մէջ է. քանիցս խնդրած է, որ զինքը թունաւորեն: Կոկորդը ծակած և սնունդը անկէ կը ընցնին. սնունդն է կաթ և ապուր: Սոսկալի կը տանջուի:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Շ Ի Ց

Յանձնաժողովը իւր քննութիւնները վերջացնելուն մօտենում է: Չեռնահաս անձնաւորութիւնները հաւատացնում են, որ կատարած քննութիւնը հայերի վերաբերմամբ նպաստաւոր է: Որ կառավարութեան կարգադրութիւնով ու առանձին կանխամտածութիւնով կանոնաւոր զօրքը կատարել է կոտորածը, որ քրդերի մասնակցութիւնը եղել է նոյնպէս կառավարութեան յանձնարարութեամբ, այս բանում դելեգատները համոզուել են:

—Սուլթանի կառավարութիւնը վերջերս մասնաւորապէս սասունցիների վերաբերմամբ ահագին հալածանք է հանել:

Վերջերս մի խումբ ոստիկան թափուել էին Սասուն, ընկել էին գիւղերը և սարսափելի բարբարոսութիւնով պահանջել էին իրանց յանձնել այն անձնաւորութիւնները, որոնք համարձակել էին քննիչներին բողոք ներկայացնել: Բացի դրանից կառավարութիւնը աշխատում է ձեռք բերել սասունցիների միջից ազդեցութեան տէր մարդոց, որպէս զի մնացածները ստիպած լինին զանազան ստորագրութիւններ տալ կառավարութեանը: Բայց հակառակ Մշոյ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցների, ժողովրդի յամառ դիմադրութիւնը շարունակում է մինչև այսօր:

—Ոստիկանութեան հարկւրապետ հաճի Քէրիմ աղան մի խումբ ոստիկաններ գաղտնի ուղարկում է դէպի Սեմալ Առաքելոց վանքի ճանապարհով: Բայց շնորհիւ հայերի աջալուրջ հսկողութեան, դեռ ևս Տատրոգոմ չը հասած՝ բացում է գաղտնիքը և մեր ծպտեալ էֆէնդին շտապում է դուրս գալ իւր ստանձնած դերից:

—Մի ուրիշ խումբ ոստիկաններ առաջնորդութեամբ հարկւրապետ Իսկանդեր աղայի ծեծ ու հայհոյանքով յաջողել են բռնել Շէնիբու Միքայէլ վարժապետին և ուրիշ մի երկուսի, ձեռքերը կապած Մուշ բերելիս՝ մօտաւորապէս 40-50 կանայք ընկնում են ոստիկանների յետեից՝ վճռած լինելով խմբովին գնալ և բանտ լեցելը Սասունցի կանանց այդ ցոյցը Մուշ մտնելիս վերին աստիճանի յուզիչ և հերոսական է եղել: Չնայած

Տեճեալ և հետիոտն ոստիկանների հրացանի կոթերով տւած հարւածներին, տկոզ և բոբիկ կանայք շարունակում էին իրենց յամառ յառաջխաղացութիւնը. նոցանից շատերի ոտներից, ձեռքերից ու գլխից արիւն էր հոսում, բայց գեռ էլի չէին լուր՝ ամենահամարձակ կերպով երեսներին տալ նրանց անամթ վարմունքը: Պէտք էր տեսնել նրանց վիճակը այդ ժամանակ: — Բողբող կանանց այդ դրութեան մէջ յաջողում է քաղաք մտնել և ահագին իրարանցում պատճառել հայ և թուրք հասարակութեանց մէջ: Շարած ոստիկանների կանայք մերժեցին կառավարութիւնից տրւած ուտեստը և գիշերելու յատկացրած տեղը: Այս եղելութիւնը յայտնեց քննիչներին: Ես աչքով տեսայ, թէ ինչպէս փողոցով անցնելիս պատի տակ շարւած սասունների կանայք ընկան քննիչներու ոտները և նրանց աղերսագիր տւին: Լրտեսների, ծպտեալ ոստիկանների թիւը խիստ շատացել է Մուշի մէջ, որտեղ որ դուրս են գալիս քննիչները, խմբերով ընկնում են նոցա ետեւից: Ոստիկանութիւնը ամեն ջանք գործ է դնում, որ ոչ մի սասունցի չմտնէ Մուշ: Վկաներից շատերը, որոնց մէջ և 29 սւինի վէրք կրող կեիէկուզանցի հայ, քըննիչներին ներկայանալու համար ստիպւած էր ծպտել և կանանց շոր հագնել: Մի խումբ պաշտօնեաներ Գալթէնդիի առաջնորդութեամբ ընկել են աշիւթները և քննիչների առաջնորդութեամբ ընկել են աշիւթները: Մուշի կոտորածը: Բայց այս բանը չյաջողեց նրանց: Քրդերը խելացի են. նոքա բացարձակ գոռում են, որ կանանաւոր զօրքը արեց կոտորածը, իսկ իրանք միայն թալանով զբաղեցին: Մի քանի օր առաջ քննիչները դուրս են եկել Մուշից և գնացել են Առաքելոց վանքը (մէկ և կէս ժամ հեռու): Մշոյ հայ հասարակութիւնը այս անգամ էլ ոգևորիչ ցոյց է անում նրանց: Ես ականատես էի անգլիական զելեգատի ձիապահի (էրզրումցի հայ) յուղարկաւորութեանը թափորին հետևում էին Մշոյ մէջ նմանը չտեսնւած բազմութիւն, ոստիկանների ու լրտեսների դէմքը չէր փոխում նրանց ուրախ տրամադրութիւնը:

Մահմեդական ազգաբնակչութիւնը ըստ երևոյթի այս կողմերում էլ խաղաղ տրամադրութեան մէջ է, բայց գաղանի խորհուրդներ միշտ տեղի են ունենում: Փանատիկոսական զգացմունքներից դրդւած թուրքերը հայերից վրէժխնդիր լինելու ծրագիրներ են կազմում, նրանց դրութիւնը դեռ ևս սպասողական է: Հաստատապէս գիտեմ, որ Խիզան գաւառում գտնուող (Բիթլիսի վիլայեթ) շէյխերից մէկը — հուշակաւոր շէյխ Զելալբեգիին ժառանգներից — անցեալ ամսոյ վերջերքը իւր գլխին հաւաքել էր յօտաւորապէս 3-4 հարիւր հոգի վիլայեթի հայերի վրայ յարձակում գործելու համար: Նրա այդ մտադրութիւնը դեռ ևս չէրագործւեց, հաւատացնում են, որ կառավարութիւնը ազրու միջամտութիւն է գործ դրել արգելելու համար: Ինչ որ էլ լինի, մի բան սպասում է հայերին, տեսնենք, ումքը երբ կը պայթի:

Բիթլիսում մի խումբ էֆենդի ու աղաներ, թուով

12 հոգի, դեռ ևս մնում են բանտում: Մի քանի անգամ սրանց առաջարկութիւն է եղել ստորագրել շնորհակալութեան թուղթ ու դուրս գալ բանտից, բայց մերժել են: Ներկայ կուսակալը արտաբուստ բարի, բայց ներքուստ շատ վտանգաւոր մարդ է: Ասում են, բայց ամիս առաջ նահանգի կրթական տեսչի կողմից առաջարկութիւն է եղել հայոց ուսումնարաններում, բացի կրօնից, մնացեալ առարկաները աւանդել թուրքաց լեզուով: Եղած բողբոցների վրայ Իզմիրլեան միջամտել է և այժմ հարցը մնում է նախկին դրութեան մէջ:

Մուրադին և իւր ընկեր Յովհաննիսին մահաւան վեճիւ է արձակել, իսկ մնացեալներին 15 տարի բանտարկութեան:

Մշոյ մէջ երկու յայտնի մատնիչներ թունաւորել են մէկը միւսին, մինը սատկել է արդէն, միւսը հոգեվարքի մէջ է:

Զ Ե Ր Մ Ա Չ Ո Ր — Շ Ա Տ Ա Խ

Պասունը անցաւ, մարեցաւ բորբոքւած խարոյկի մը նման, թերևս ասեմ ոմանք, բայց մեր կարծիքով նա չի անցեր և պիտի չանցնի, որչափ ալ զոհեր տրւած ըլլայ: Նա կապրի տակաւին, ինչպէս ապրած է դարերով միշտ իւր փառաւոր անունի հետ: Մենք կը ճանչնանք սասունցուն Արաբիայի ամիրապետներու ժամանակէն և աւելի առաջ, նա միշտ անվախ առիւծ եղած է և պիտի մնայ:

Իսկ անցող մարդը վասպուրականցին է, որ չի համարձակիր սասունցու նման ձայն բարձրացնել և հերոսի պէս նահատակւել. նա ոչխարի նման վիզը ծռած սպանդանոց կը վազէ ու այնպէս կը մորթւի, կանցնի՝ առանց ձիջ մը անգամ հանելու:

Քաջբերունեաց երկրէն գիւղերով կը գաղթեն, չը կրնալով գիմանալ կառավարութիւնէն թելադրւած քիւրդերու ստակալի հարստահարութիւններուն: Գիւղեքիւրդերու ստակալը հարստահարութիւններուն: Գիւղերը կամայանան, դաշտերը անապատ կը դառնան, ու խեղճ գիւղացին ոչինչ չկրնար մտածել այդ մասին: Անոր միակ միջոցը գաղթելն է, անօրէններու ձեռքէն ազատելու համար:

Ու Շատախ, մեր նախկին Զերմաձորը, 4-5 տարիէ վեր արեան ճապաղիք դարձած է: Յայտնի աւազակապետ Շաքիր դեռ տարի ու կէս առաջ էր, որ սպանեց չորս աննման թաղեցիներ, որոնց համար ամբողջ Շատախը սուգ պահեց: Անկէ վերջ ու առաջ քանի քանիներ այնպէս սպանւած են քիւրդերէն և կառավարութեան ձեռքով: Այդ անխիղճ բռնապետներ՝ բոլոր թեան ձեռքով: Սեպհականութիւն դարձնելով մէկտեղ չեն շատանար ոչխարի նման կթելէ ու կսպանին ալ:

Ամեն քիւրդ աղան իրեն թեմական միջամտութիւն որոնցմէ տարեկան որոշ քանակութեամբ իրեն բաժին կը վերցնէ, տասանորդէն շատ աւելի, նեղ ընկած ատեն բռնի կերպով կը պահանջէ, ինչ որ պէտք ունենայ, մերժել չի կրնար ըլլալ:

Թշառ շատախցին՝ երկու երեք անգամ հարկ վերաբերելով ու ամեն տեսակ զրկանքներ կրելով, դարձեալ անբաժան կապած է իւր սիրելի երկրին, իւր գեղեցիկ լեռներուն:

Չորս տարիէ վեր տաճիկ կառավարութիւն սկսած է բացարձակապէս ձգմելով քամել շատախցուն, հնձանի նման: Նա՝ Շաքիրին իրեն գործիք դարձնելով, չբաւականացաւ, նա քիւրդի հարստահարութիւններէն գոհ չմնաց, ու հիմա սկսած է ինք արձակ համարձակ ձընշել ու կեղեքել:

1892 թւի վերջեր Շատախի մէկ յիսնապետի սպանելը Ծիծախց գեղի մէջ Շաքիրի երկու ծառաներու և Սիւրկինի ձորի մէջ մէկ ոստիկանի և մէկ թիւրքի սպանութիւնը կատղեցուցին, որոնք պարզ վրէժխնդրութեան ցոյցեր էին՝ տաճիկ կառավարութիւնը կատղեցուցին և նա իւր փրփրայի զայրոյթը, անարգ կըտղանքը թափեց անմեղ գիւղացիներու վրայ: Բանտը լեցւեցաւ թաղեցի, կաճէթցի և ուրիշ գիւղացիներով, ու մինչև հիմա կը շարունակին ձերբակալութիւններ, որոնցմէ և ոչ մէկը մեղաւոր է: Ձերբակալութիւններէն մեծ մասը, մօտ 40 հոգի, վանի կեդրոնական բանտը փոխադրուած են, ուր կը մնան թշառ, անօգնական, մերկ ու նօթի:


Ամբողջ Շատախը սոսկալի տագնապի մէջ է: Ներկայ ըրպէն ձգնաժամ մըն է շատախցու համար. եթէ նա փորձէ սասունցու նման վերջին փորձ մը, գուցէ և ապրի, ապա թէ ոչ, այդ գեղեցիկ ոյժը կորսուած է այլ ևս:

Բանտարկւածներուն ազատելի չկայ, փախստականներուն ապաստանարան չկայ, մատնութիւններուն չափ սահման չկայ, կեղեքումներուն, հարստահարութիւններուն յագեճալ չկայ, սրբապղծութիւններուն հաշիւ չկայ:

Քիւրդը կը սպառնայ եկեղեցու կոչնակի ձայնը գաղթեցնել, տաճիկ զինուորը՝ ձերմակ շուն խաչերով զարգարելով, թաղի մէջ կը պտտցնէ, սպառնալով Սասունի նման կոտորել և Շատախը: Խեղճ գիւղացու կայքը՝ մէկ թաղէքը կամ կապերտը, կամ եզն ու ոչխարը բռնի կը ծախէ կառավարութիւնը և իւր տուրքերը կը գանձէ: Քիւրդը հազարներով կը տանի ոչխարը, փեթակները անոնց համար կը պատրաստին մեղր, աշխատասէր հայ կինը անոնց համար կը պատրաստէ իւղ և ամեն տեսակ բարիք:

Ու ծայրայեղ յուսահատութեան մէջ, սասունցու նրման շատախցին ալ աչքերը յառած օգնութիւն կը խնդրէ պաղատագին իւր եղբայրներէն:

Օգնութիւն ուրեմն, ով որ կարեկցական նայւոցք մը ձգեց Սասունի վրայ: Օգնութիւն... քանի չէ փշեր իւր վերջին շունչը շատախցի լեռնային կտորիճ հայը:



Ն Ա Մ Ա Կ Գ Ը Ր Շ Է Կ Ը Ի Ծ

Եողատի և շրջակայ հայ գիւղերու երկրագործներն իրենց քաշած նեղութիւններէն զատ, ստակ մը անգամ չունին սերմի համար: Երկրագործական անուսով կազմած բանկան ալ աւելի հարուստներուն համար է. հայ

գիւղերուն և ոչ մէկին մէկ ստակ տւած չէ, ուստի աղքատ գիւղացիք չեն կրնար ոչ ցանել և ոչ վարել: Արդէն օրապահիկին հայթայթելու անկարող քրիստոնեաներու վրայ տուրքերն ալ ծանրացած են, որոնց գանձելու համար, այժմ խումբ խումբ զօրքեր կը ղըրկւին: Չօրքերն իրենց ու ձիերնուն փորը կշտացնելէ վերջ անլուր անկարգութիւններ կրնին: ՊՕՕ, անհաւատ գեաւուրներ, գնացէք մեզի մէկ մէկ ալ աղջիկ բերէք, ապա թէ ոչ հիմա ձեր գիւղերը կայրենք. հաւատոյ թշնամիներ, արդէն ձեր մահը, հոգին և պատիւնիդ կուրանի օրէնքով մեզի հէլալ է՝ ըսելով, ամեն վայրակութիւն կընին՝ մոխթարները կը ծեծին, կը վիրաւորին, անոնց տունները մոտնելով, մանկամարդ կը նիկնեցու և աղջիկներու մազերէն բռնելով և քաշելով, կը բերին սենեակը և ամուսնոյն կամ նշանածին ներկայութեամբ... քաղաքակիրթ ազգերու մտքէն և երեւակայութիւնէն չանցնելուն համար, չափազանցած կարծելէն կը կասկածիմ. սակայն ճշմարտութիւնը այս է: Այո՛, դիտմամբ ամուսիններնուն ներկայութեանը անպաշտպան սիրելիներնին կը գրկին և իրենց գազանային ցանկութեանը կը զոհին: Սիրելիներնին այսպէս բռնի կերպով անպատուելը աչքով տեսնելու հարկադրող թշառներով կը լեցնուն դարձեալ բանտերը, որովհետև տակաւին լեզունին կը խօսի, կը գանգատին, որովհետև զիրենց պաշտպանելու պաշտօն ունեցող կառավարութեան կը գանգատին: Ահա Մուստաֆա փաշայի նախագահութեամբ յանձնախումբի կատարած արդարութեան պտուղները և աւելի ահաւորները:

Արդարութեան դուռն անգամ գոց լինելով, որուն և ուր տեղ դիմելու է. մեր համբերութիւնը հատաւ: Քաղաքակիրթ աշխարհը այս տեսակ բռնութիւններ, որք տեղի ունեցան 1860-ին Գամասկոսի մէջ, 1878-ին Պուլկարիայի մէջ, լսած ու պարագաներովը տեղեկացած ատեննին օգնութեան հասածին, մինչդեռ այս բռնաբարութեանց այս աստիճան ցուրտ աչքով կը նային:

Երկու ամիս առաջ կեսարիոյ Թալաս գիւղէն, Անգարայի Գալէճուք գաւառակի մէջ վաճառականութեամբ զբաղող Գէրպէրեան Ղազիր Գալէճըքէ 5 ժամ հեռաւորութեամբ գտնուած Չապէլ գիւղէն անհետացած է: Այս մասին յիշեալին ազգականները դիմեցին կառավարութեան, որ նոր թէև քանի մը անձեր ձերբակալեց, բայց ոչինչ մէջ տեղ չելաւ:

Կիրենցի Շիրանեան Ղազար, Գըրշէհրի Աւանօղ գաւառակի Չըպլուգ գիւղը առուտուր ըրած ատեն, զինեալ չէրքէզ ձիաւորներ տալով՝ յիատիշահը հրաման ըրած է, գեաւուրները պիտի սպանենք՝ ըսելով, ցերեկ ատեն 200 թուրքի ներկայութեամբ անչափ կը ծեծեն, որ պաստեխի պէս կը փուր. ապա պարկի մը մէջ դնելով, իբր ձիուն կը բարձին, ձիու մէկ կողմէն միւսը կը ձգեն. այս գործողութիւնը քանի մը անգամ կը կրկնին: Այս քստմնելի տեսարան դիտող իսլամներն վերջապէտ գթալով, անոնց ձեռքէն կառնին: Չէրքէզները Ղազարին 60 ոսկին և ունեցածը կառնին կերթան: Վիրաւորը հոգեւար վիճակի մէջ հազիւ Եողատ

կը բերուի և թէև բողոք կը լայ, բնաւ ականջ չի կախ-
ւեր: Երէք որ վերջ Ղազար կը մեռնի. այն ատէն կա-
ռավարութիւնը բժիշկ մը կը շրկէ քննութեան.....

1894 թ. նոյեմբերի 10-ին, Եօղզատի Ուզունլու գա-
ւառի Չաթուկ գիւղէն, ՔեաՏիա Յակոբի տղան Կեսա-
րիոյ ճամբուն վրայ երեք հաս թիւրք գողեր ձորի մը
մէջ կը սպանին և ունեցած ապրանքները ու ստակը
կը գողնան:

Քիչ մը ատեն, Թէրչիլի գիւղէն Մուսթար Սարգիսի
վոյ յարձակելով, կը սպանին և հետը գտնած 10
մարդոց ականջնին, քիթերնին կտրելով և ձեռքերնին,
ոտերնին կապելով, արտի մը մէջ երեսի վոյ կը ձը-
գեն և առանց ականջ կախելու անոնց լացին ու կո-
ծին. անոնց քով գտնած ստակ և ինչ որ կայ կառ-
նին և կը փախին: Ասոնց և ուրիշ շատ մը քրիստո-
նեաներու ճեծել, վերաւորել և յափշտակելնին, հայ
գիւղացիներու կողմէ անգամ մը ևս տեղական կառա-
վարութեան հաղորդեցաւ թէև, բայց դարձեալ կա-
րեւորութիւն չտրեցաւ:

Հինգ, տասն և հինգ հոգի սպանել, 50-100 մարդ
կողոպտել, ասոնք մասնակի կորուստներ են: Բայց ահա
ամենէն սարսափելի կէտը հոս է. — կառավարութիւնը
գմեզ ամբողջապէս ջնջելու ճամբուն մէջ է. արդարու-
թեան դատարանները մեզ համար գոցած են, հիմա
յիշեալ շրջանակներու հայու մը իրաւունքը պաշտպա-
նել հնար չէ:

Ո՞ր մէկը գրեմ. գետնափոր այրիի մը մէջ քաշած
և այս գրերը գրած ժամանակն ալ, աչքերս որ կողմն
ալ դարձնեմ, սպանութիւն, բռնաբարութիւն, վայրե-
նութիւն, ուրիշ ոչինչ կը տեսնիմ...

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Դ Ե Ր Ձ Ա Ն Ի

IV

Քաղաքէս 6-7 ժամ հեռի Պայապան Նահիէե հայաշատ
Խնձորեկ գիւղացի կիւլապողլի իսլիլ աղայի տասնամեայ
բազմաթիւ ոճրագործութիւնք, չարագործութիւնք, կառա-
վարութեան դէմ ըմբոստ գտնելով փախստական թափա-
ռելը և զինք ձերբակալելու գնացող կանոնաւոր զօրաց
զինու զօրութեամբ գիմաղրելը, կառավարական ձիեր
գնդակահար սպանելը և այլն, քաջածանօթ են ոչ միայն
Երիզայի բոլոր կառավարական պաշտօնատանց, այլ և Կա-
րին ու Պօլիս բազմադիմի զիմուսներ եղած և բողոքած
է. սակայն սպարդին, վասն զի ուշափ որ ձերբակալելու
հրամաններ եկած են, բնաւ ձեռնարկ եղած չէ իրագործել,
չնորհիւ նրա անձուէր պաշտպան Վահիգ պէկին: Խիւր
զաւակները և արբանեկները ի բացակայութեան քանիցս
կը դատուին ու երկարամտայ բանտարկութեան կը դատա-
կարուին, ինչպէս Կարնոյ գաւառական թերթը ի պաշտօ-
նէ կը յայտարարէ. սակայն ինչիլ որոշած է բնաւ անձնա-
տուր չլինել, ինչ որ ալ ըլլայ, որով ամենայն ազատու-
թեամբ կը շարունակէ իր ոճրագործութիւնք և խժգժու-
թիւնք: Ասկէ մի քանի տարի առաջ Կարնոյ կուսակալ

Հասան իսլայի փառա քննական պտոյտի մ'առթիւ Երիզա
գալու ժամանակ Բթաթիճ գիւղը Վահիգ պէկի հիւր կը
լինի, ուր ի պատիւ իրեն եղած մեծայարգ ընդունե-
լութեան և ասպնջականութեան փոխարէն կը շնորհէ
Վահիգ պէկի ի վաղուց անտի երեւակայած և երազած
Խէլիլի կայսեր բարձրագոյն արժանացումը: Հետեւեալ օրը
Վալի փառան իւր հետ քաղաք կը բերէ՝ Վահէտ պէկը և
Խէլիլ աղան, որք ամենայն յոխորտանօք կը շրջին բար-
ձրապլուս և սիգապան: Ո՞վ պիտի համարձակի դիտողու-
թիւն մ'ընել Խէլիլ աղայի ընթացից մասին, քանի որ կայ-
սերական գթութեան արժանացած է և իւր անզուգական
պաշտպան Վահիգ պէկի հովանաւորութեան տակ կը գրտ-
նի: Նահանգապետի մեկնելէն վերջ, Խէլիլ կը դառնայ իր
բնակավայրը և հաւատարիմ իւր վաղեմի սովորութեանց,
կանոնադառնայ իր հին արհեստին. իւր ազգական և էջի-
րէթի պէս Չէյնալ աղան, որ իր գործառնութեանց մասամբ
արգելք կը լինէր, կը սպանէ: Ասոր և ուրիշ արարքնե-
րուն համար կառավարութիւնը կը հետամտի ձերբակալել
զայն և իմանալով, որ այն օրերը քաղաքէս 3-4 ժամ հե-
ռի, Քիշտիմ գիւղին մէջ կը գտնուի, կը որոշէ զինու զօրու-
թեամբ ձերբակալել զայն: Սակայն զօրաց գումարտակը
տակաւին ճամբայ չելած, որոշումը Վահիգ պէկէն, որ նոյն
միջոցին վարչութեան անդամ էր և Խէլիլի երաշխաւոր,
կը հաղորդուի Խէլիլի, որ կը փութայ ապաստանիլ իւր ա-
նառիկ և ամբարկի գիւղին Ղօզուլճան: Զօրաց գումարտա-
կը՝ Թափուր աղասին հրամանատարութեան տակ, անդ
աստ թափառելէ վերջ, կը վերադառնայ ձեռնունայն Խէ-
լիլ, իբրեւ ժանդարտ և պատուհաս Խնձորեկի և շրջակայ
հայ գիւղացոց, կը շարունակէ իւր ընթացք մինչեւ անց-
եալ 1894 տարւայ վերջերը, որ ատեն կը բարեկամանայ
չորրորդ բանակի Նազիլէ գայմագամի Իսմայէլ պէկի հետ,
որու շնորհիւ Երիզա կուգայ և սկսի ազատ շրջիլ. սակայն
հետեւեալ օրը, նախապէս ազդարարած լինելով թէ՛ պիտի
բռնուի, անյայտ կը լինի: Ասկէ մի քանի օր առաջ Իսմայէլ
պէկի գաւակը կը մեռնի: Խէլիլ ցաւակցութիւնը յայտնելու
համար քաղաք կուգայ և Իսմայէլ պէկի հիւր կը լինի:
Կառավարութեան կիմացի Խէլիլի գալուստը, որուն ան-
գիտակ չէր արգէն և իբր թէ ինք կը հետամտի բռնել
զայն, սակայն Իսմայէլ պէկ կը յայտարարէ՝ թէ իր հիւրը
չկրնար կառավարութեան յանձնել: Նոյն գիշերն իսկ Խէլիլ
ի փախուտ կաճապարէ գիւորական բերդէն, ուր հիւր ե-
ղած էր Իսմայէլ պէկի:

Ահաւասիկ հակիրճ նկարագիրը սոյն գող, աւազակ, մար-
դասպան ոճրագործին և նրա մասին ի գործ դրած կա-
ռավարական միջոցներուն, նաև նրա անբաժան պաշտ-
պան և Բթաթիճ գիւղի կոյս աղջկան բռնի առեւանգման
ու բռնաբարման յայտնի հեղինակ Վահիգ պէկի, որոյ ի
վարձ իր քաջագործութեանց և շահատակութեանց եր-
րորդ կարգի պատուանշան կը տրուի և որ ներկայիս մէջ
ոպի ի բռնի կաշխատի եղբայրը՝ նոյնպէս յայտնի հեղինակ
առեւանգման և բռնաբարութեանց մէծըսը իտարէի
անդամ ընել տալ, որպէս զի կարենայ ազատ ու համար-
ձակ գործել:

Արդարեւ շատ ցանցառ կերպով գրւած են սոյն տեղակա-
գրի մէջ Խէլիլի և Վահիգի արարքները: Խէլիլ ներման
արժանանալէ վերջ, միմիայն Չէյնալ աղան կտոր կտոր ը-
նելով, չսպանեց, այլ Դերջանի Ղազաղ գիւղէն, գուտ հայա-
բնակ, Առաքել Գրիգորեան, իւր կարճութեամբ և աներ-
կիւղութեամբ հանրածանօթ, անձն ալ Ղօզուլչայի տակը
սպանել տուաւ 1893 թ. օգոստոսի մէջ: Առաքելին եղբայ-
րը՝ հաճին Տրապիզոն կը գտնուէր այդ միջոցին. երբ իմա-
ցաւ, անմիջապէս Երզնկա գալով բողոքներ տուաւ դատա-
բանին, կառավարչին և Միւշիթիթիին, բայց բնաւ ար-
գիւնք մը չտեսնեցան: Հաճին Խէլիլ աղայի բացակակ
սպառնալիքներէն վախնալով, գիւղն ալ չկրցաւ երթալ,
Երզնկայ բերդ տուաւ իւր և իւր եղբոր ընտանիքները և

Թողլով երեսի վրայ կամ աւելի ճիշտը՝ Թողլով քիւրդե-
րուն հողերն ու տուն տեղը, այսօր Երզնկայի մեջ յետին
ծայր չքաւորութեան եւ խեղճութեան մէջ կը տառապին:
Խէլի աղան նոյն տարին զազաղցոց եզներն ալ քշել տւաւ,
երկու անգամ Սրավանի (Իերջանի եւ Բաբերդի մէջ
տեղ) լեռներէն մեծ կողոպուտ բերաւ՝ զարնելով կարա-
ւաններ: 94 թ. յուլիսի մէջ ի Սողոմեր Սառահունիք յայտ-
նի Պէդդէշին տողցը 400-ի չափ նորատունկ բարդիները
կտրել տւաւ:

Խնձորեկ հայոց խոտերը, մարագները այրել, տաւարնե-
րը, հօտերը քշել տանել ամեն աչուն Խէլի աղայի համար
սովորական գործ մը գարձեր էր. բայց 94-ի սեպտեմբերի
մէջ զիշեր մը իր յելուզակ տղաքը խուսիով մը կուզան
Խնձորեկ քանի մի հայեր սպանելու նպատակաւ, որք կը
գտնուէին Հիւսէին անունով քիւրդի մը քով. բարեբախ-
տաբար Հիւսէին աղային տանը պատը դեռ բողբոլովին չծա-
կած, կիմանան ներսինները եւ կը սկսին հաւար պոռալ.
այդ միջոցին Հիւսէին աղայի եղբայրը գուր ելնել ուզալ
ժամանակը՝ 27 փնդակով կը զարնուի ու կը մեռնի. զիւ-
րացիք կը հանին, Խէլի մարդիկը կը փախչին: Միւս օր
զիւրացիք հայ, քիւրդ կը լեցւին քաղաք, կը բողբոլեն եւ
կըսեն, թէ քանի որ Խէլիը անպատիժ կը մնայ, մենք այլ
եւս չենք կրնար երթալ զիւրը եւ այլն, բայց բող չի ըլ-
լար: Բայց ինչ կըսեմ. այս այն Խէլի աղան չէ՞, որ 92 թ.
ամառը, առաւօտ մը, մօտ 30 զինեալ յիւրզակներով կու-
խեց Իերջանի Վուրտիլէր զիւրը եւ զիւրացոց ամբողջ հա-
րատութիւնը՝ տաւարի հօտերն ու նախիրը թալլեց, քշեց
տարաւ, զիմադրելու համարձակող մի տասը զիւրացիներ
ալ այր, կին ծանրապէս վիրաւորելով:

Այս չափը կարծեմ բաւական է զազափար մը տալու հա-
մար ի մասին Խէլի աղայի Պալապանի եւ Իերջանի ժո-
ղովուրդը նրա անխօս սարուկները գարձեր են, նորա ա-
մեն մէկ հրամանները իր պատգամ կընդունին, անցեալէն
խրատուելով, զիւրացիք նորա ամեն կամայականութեանց
կը զիջանին ու կը համակերպին. բողբոլել այլ եւս մտքեր-
նէն չանցնիր:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՄԱԿԵՒՈՒՆԱՅՈՒՄ

Մակեդոնիայում ապստամբութիւն է. այս մասին
մենք ստացել ենք մեր մի մակեդոնացի ընկերոջից տե-
ղեկութիւններ, մի ընդարձակ նամակի հետ, բայց տա-
րաբախտաբար տեղի խիստ սղութեան պատճառով ան-
կարող եղանք տպագրել այս համարում. մենք կաշխա-
տենք այդ անել եկող համարներում: Այժմ շտա-
պում ենք յայտնել մեր վիճակից ժողովուրդին մեր
անկեղծ բուռը համակրութիւնը: Մեր վիճակը ու թըշ-
նամին նոյնն է, մեր գործը ընդհանուր է, ձեռք տանք
և միացած ուժով կուենք լէշակեր հրէշի՝ սուլթանա-
կան կառավարութեան դէմ. միայն սրա մասը կարող
է մեզ երջանիկ վիճակ բերել:

Մենք վերջին ժամին ստացանք Համիդիէի և կանոնա-
ւոր զօրաց կիսաբաժինների հրամանատարի փոխանորդ
Մերլիվա Մէհմետ Բէհմի պաշտօնական գրութիւնը, որ
շտապում ենք հենց այս համարում զետեղել: Թողնելով
եկող անգամին մեր կողմից տալ մի քանի պարզաբա-

նութիւններ, հրաւիրում ենք ընդհանուրի ուշադրու-
թիւնը այս նշանաւոր դօկումէնտի վրայ:


Մատնիչ վերաբոյժ Թիւթիւնջեվի զարկման հեռագի-
րը, որ ստացանք յունիսի 27-ին(ն. տ.), անմիջապէս
տպագրելով առանձին թերթիկների վրայ, ցրեցինք:



Ա Ձ Դ

Վերջերս լսելով, թէ շատերը Դաշնակցութեան անունով
նւէրներ եւ պարտերական վճարներ հանգանակած են առանց
այդ զուտարները հասցնելու ուր որ անկէ, ասով կազարա-
րենք մեր շրջանի մեջ գտնուող քոլոր խմբերուն, համակրող-
ներուն եւ ընթերցողներուն, որ երբ Դաշնակցութեանս անու-
նով իրենց վճարած զուտարները հրատարակած չը տեսնեն
իրենց վճարած թւականէն ետքը լոյս տեսնող, Դրօշակի
երեք-չորս թւերուն մէջ, գիտնան թէ այդ զուտարները չեն
մտած Կեդրոնական Կօմիտէի մտուկը: Ստիպողաբար կա-
ռաշարկենք, որ վճարողները փութան այդ պարագային մէջ դե-
միւ «Դրօշակի» խմբագրութեան, մանրամասն յայտնելով հա-
սարակաց զրամը իւրացնող մարդու անունը, մականունը, ար-
հեստը եւ հասցէն, որպէսզի Կեդրոնական Կօմիտէն եւս այդ
մասին հարկ եղածը ի գործ դնէ:

Կ. ՊՈՂՄԻ ԿԵՂԻՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ



ՆՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Վիշապ քաղաքի կեդրոնական սնդուկի մէջ ստաց-
ւեցան.

- Աշտարակ խմբէն 100 դահեկան, Սուրհանդակ 30
- դահ., Պարոյր 20 դահ., Ճ-ից կէս անգլիական, Բագար
- 40 դահ., Ա. և Ս. 40 դահ., Ա. և Ն. 20 դահ., Անի խմբ.
- 75 դահ., Կացին 80 դահ., Վանօ 95 դահ., Նորաշէն 160
- դահ., Արևելեան 70 դահ., Քառս 10 դահ., Մատթէո-
- սեան 70 դահ., Վարդանեան 60 դահ., Վրէժ 40 դահ.,
- Թորգոմեան 140 դահ., Յոյս 50 դահ., Յովնան 180 դահ.,
- Թաթուլ 140 դահ., Պիծակ 150 դահ., Վառօդ 100 դահ.,
- Խակէ 110 դահ., Պարոյր 20 դահ., Մուշեղ 20 դահ.,
- Փիւսկիւլ 20 դահ., Կ. Թ. 10 դահ.

Գագիկ և Հեթում 1635 դահ.

Նիզակ քլ. սնդուկի մէջ ստացւեց օր. Բ. Ա. Մ-

ից 800 դահեկան:
Նորաշէնից (Ս. Կ.) 100 բուբլի, Եւպ-ից 100 բուբ.,
Գետաշէնից 15 բուբ., Ճառագայթից 150 բուբ., Ա-
պառաժից 1000 բուբ., Թ-ից 100 բուբ., Ախթաա
գիւղ-ից 100 բուբ., Կայծիկից 378 բուբ., Դամաւան-
դի ստորոտներում ապրողներից 205 բուբ., Բ-ից 600
բուբլի:

Ապառաժ Խ. 10 հրացան և 2148 փամիուշտ, Ա-
պառաժ խմբի միջոցով Ս. Տ. №ից 10 այնալու, Խ-ից
105 այնալու փամիուշտ:

Շ-ի Ժ. ք. օր. Մ-ից 10 Ֆր., Գ-ի Բեր. ք. №-ից
5 մարկ:

Դաշնակցութեան անձնօթններից խնդրում է թղթակցութեան
և նւիրատութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան